ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍԳԼ-ԳՀԱՇՁԲ-20/43

ք. Երևան «22» հունիս 2020թ.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն», ի դեմս Արման Հովակիմյանի, որը գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ամարաս-Յուս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յուրա Աղյանի, որը գործում է -«Ամարաս-Յուս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ջեռուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Պայմանագիրն ուժի մեջ դնող համաձայնագրի կնքման օրվանից հաշված 45-րդ օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 134 300 000 (հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 22 387 810 (քսաներկու միլիոն երեք հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Պատվիրատուն վճարում է փաստացի կատարված աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ փաստացի կատարված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 10	Ք. Երևան, Քոչարյան 4/2
ՀՎՀՀ 00856548	Արդշինբանկ ՓԲԸ էրեբունի մՃ
ՀԷԲ Խորհրդային 1	Հ/Հ 2480101344630000
Հ/Հ 163075481800	ՀՎՀՀ 00837047
Տնօրեն Ա.Հովակիմյան	Տնօրեն Յու. Աղյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« » 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Գնման առարկա է հանդիսանում ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքները, որոնք ընդգրկում են՝

1. Կաթսայատան մոնտաժ
2. Մարտկոցների մոնտաժ արտաքին
3. Կանգնակների համակցում գործող մատակարար և հետադարձ խողովակներին

Կից ներկայացվում է ծավալաթերթ-նախահաշիվը

Հ/Հ	Անվանումը	Չափ Տիպ	Չափման միավոր	Քանակ	Գին	Գումար
1	2	3	4	5	6	7
1	Կաթսադ	Նոմինալ օգտակար ջերմային հզորությունը առնվազն 120կՎտ, ՕԳԳ-ն 100% ծանրաբեռնվածության պայմաններում առնվազն 97, Գազի ծախսը 100% ծանրաբեռնվածության պայմաններում առավելագույնը 12,5մ3/ժ, տաք ջրի արտադրումը 30' պայմաններում առնվազն 3լ/ր, ջեռուցման ջերմաստիճանը 20-85C, առավելագույ աշխատանքային ճնշումը առնվազն 4,4; էլեկտրասնուցումը առավելագույնը 230վ 50hg	հատ	7	1630000	11410000
2	Մարտկոց P=500	Չափսերը՝ լայնությունը 80մմ, երկարությունը առնվազն 580մմ, խորությունը առնվազն 80մմ, քաշը՝ առնվազն 1,1կգ, ջերմատվությունը առավելագույնը 170վտ, ջրի տարողունակությունը առնվազն 0,38լ:CE, EN442, ISO9001:2000 և ROHS որակի սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:	հատ	18850	2600	49010000
3	Մարտկոց P=350	Չափսերը՝ լայնությունը 80մմ, երկարությունը 420-432մմ, խորությունը առնվազն 80մմ, քաշը՝ առնվազն 0,9կգ, ջերմատվությունը առավելագույնը 150վտ, ջրի տարողունակությունը առնվազն 0,29լ:CE, EN442, ISO9001:2000 և ROHS որակի սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:	հատ	3770	2160	8143200
4	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	Առաջարկվող մարտկոցների պահանջներին համապատասխան	հատ	2262	1942	4392804
5	Միջադիր	Առաջարկվող մարտկոցների պահանջներին համապատասխան	հատ	4524	40	180960
6	Հետադարձ գծի փական ltap կամ համարժեք	Առաջարկվող մարտկոցների պահանջներին համապատասխան	հատ	2262	2450	5541900
7	Ճեռքի կարգավորման փական ltap կամ համարժեք	Առաջարկվող մարտկոցների պահանջներին համապատասխան	հատ	2262	2450	5541900

8	Անցում 20*1/2" M Kaldo կամ FIRAT	Անցում, չափսը 20 մմ, 1/2"	հատ	3,793	250	948250
9	Խաչուկ 32*32*32*32 Kaldo կամ FIRAT	Խաչուկ, չափսը 32*32*32*32 մմ	հատ	1,784	100	178400
10	Եռակողմ 32*20*32 Kaldo կամ FIRAT	Եռակողմ, չափսը՝ 32*20*32	հատ	910	90	81900
11	Եռակողմ 40*20*40 Kaldo կամ FIRAT	Եռակողմ, չափսը՝ 40*20*40	հատ	715	204	145860
12	Եռակողմ 40*25*40 Kaldo կամ FIRAT	Եռակողմ, չափսը՝ 40*25*40	հատ	130	210	27300
13	Եռակողմ 25*20*25 Kaldo կամ FIRAT	Եռակողմ, չափսը՝ 25*20*25	հատ	195	102	19890
14	Անկյուն 40*40 90 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 90 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 32մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 7մմ, քաշը առնվազն 0.068կգ	հատ	1,300	212	257600
15	Անկյուն 40*40 45 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 45 աստիճան,Խողովակի արտաքին տրամագիծը 32մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 7մմ, քաշը առնվազն 0.068կգ	հատ	520	190	98800
16	Անկյուն 32*32 90 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 90 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 25մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 4,5մմ, քաշը առնվազն 0.040կգ	հատ	2,068	105	217140
17	Անկյուն 32*32 45 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 45 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 25մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 4,5մմ, քաշը առնվազն 0.040կգ	հատ	585	110	64350
18	Անկյուն 25*25 90 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 90 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 25մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 4,5մմ, քաշը առնվազն 0.023կգ	հատ	763	80	61040
19	Անկյուն 25*25 45 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 45 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 25մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 4,5մմ, քաշը առնվազն 0.023կգ	հատ	520	85	44200
20	Անկյուն 20*20 90 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 90 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 20մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 2,75մմm, քաշը առնվազն 0.014կգ	հատ	5,509	50	275450
21	Անկյուն 20*20 45 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, 45 աստիճան, Խողովակի արտաքին տրամագիծը 20մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 2,75մմm, քաշը առնվազն 0.014կգ	հատ	2,007	40	80280
22	Անցում 40*32 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 40մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը	հատ	98	120	11760

		32մմ				
23	Անցում 32*25 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 40մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 32մմ	հատ	1,426	70	99820
24	Անցում 32*20 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 32մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 20մմ	հատ	2,657	55	146135
25	Անցում 32*32 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 32մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 32մմ	հատ	283	60	16980
26	Անցում 25*25 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 25մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 25մմ	հատ	40	48	1920
27	Անցում 20*20 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 20մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 20մմ	հատ	1,357	30	40710
28	Անցում 25*20 Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, անցման մի կողմի արտաքին տրամագիծը 25մմ, մյուս կողմի արտաքին տրամագիծը 20մմ	հատ	98	37,163	3641,974
29	Խողովակ 40 ETALON , Kaldo կամ FIRAT	Խողովակի նյութը պոլիպրոպիլեն, Խողովակի արտաքին տրամագիծը 40մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 6,7մմ; ներառում է նաև խողովակների ամրացման նպատակով անհրաժեշտ անցումները:	հատ	3,120	1400	4368000
30	Խողովակ 32 ETALON, Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, Խողովակի արտաքին տրամագիծը 32մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 5,4մմ, ներառում է նաև խողովակների ամրացման նպատակով անհրաժեշտ անցումները:	մետր	4,399	700	3079300
31	Խողովակ 25 ETALON, Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, Խողովակի արտաքին տրամագիծը 25մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 4,2մմ; ներառում է նաև խողովակների ամրացման նպատակով անհրաժեշտ անցումները:	մետր	1,446	640	925440
32	Խողովակ 20 ETALON, Kaldo կամ FIRAT	Նյութը պոլիպրոպիլեն, Խողովակի արտաքին տրամագիծը 20մմ, Խողովակի պատի հաստությունը՝ 3,4մմ; ներառում է նաև խողովակների ամրացման նպատակով անհրաժեշտ անցումները:	մետր	3,364	520	1749280
33	Անցում 32*1" M (H) Kaldo կամ FIRAT	Անցում 32*1" M (H) Kaldo կամ FIRAT	հատ	222	650	144300
34	Ֆիլտր Φ32*32 Kaldo կամ Miraya	Ֆիլտր Φ32*32 Kaldo կամ Miraya	հատ	101	2300	232300
35	Պտուտակ 4*40	Պտուտակ, չափսը 4*40մմ	հատ	11,398	7,5	85485

36	Պտուտակ 3,5*35	Պտուտակ, չափսը 3,5*35մմ	տուփ	22,750	6	136500
37	Դյուպել N7	Դյուպել պտուտակ, պլաստմասայով	հատ	34,148	12	409776

Ընդամենը	98 172 571,97
Շահույթ 14 %	13 744 130,00
Ընդամենը	111 916 701,97
ԱԱՀ 20%	22 383 298,00
Ընդամենը	134 300 000,0

Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Գյուրջյան 10 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն Ա.Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ ՍՊԸ
Ք. Երևան, Քոչարյան 4/2
Արդշինբանկ ՓԲԸ Էրեբունի մՃ
Հ/Հ 2480101344630000
ՀՎՀՀ 00837047
Տնօրեն Յու. Աղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » հունիսի 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՁԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ձեռուցման համակարգի տեղադրման աշխատանքներ	Պայմանագրի կնքման հաջորդ օրվանից	Պայմանագրի կնքման հաջորդ օրվանից հաշված 45-րդ օրը
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման հաջորդ օրվանից	Պայմանագրի կնքման հաջորդ օրվանից հաշված 45-րդ օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն Ա.Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ ՍՊԸ
Ք. Երևան, Քոչարյան 4/2
Արդշինբանկ ՓԲԸ էրեբունի մՃ
Հ/Հ 2480101344630000
ՀՎՀՀ 00837047
Տնօրեն Յու. Ադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » հունիսի 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45331100	ջեռուցման համակարգի տեղադրման աշխատանքներ	Համաձայն ներկայացված կատարողական ակտերի											

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 10
ՀՎՀՀ 00856548
ՀԷԲ Խորհրդային 1
Հ/Հ 163075481800
Տնօրեն Ա.Հովակիմյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԱՄԱՐԱՍ-ՅՈՒՍ ՍՊԸ
Ք. Երևան, Քոչարյան 4/2
Արդշինբանկ ՓԲԸ Էրեբունի մՃ
Հ/Հ 2480101344630000
ՀՎՀՀ 00837047
Տնօրեն Յու. Ադյան

/ստորագրություն/
Կ.Տ